

ԱՅԼԵՒՈՅԼՔ

ՀԱՅ ՆՈՐԱԳՈՅՆ ԿՕՄՊՈԶԻՏՈՐՆԵՐ

(20-րդ դար)

Թ Խ Ֆ Ա Վ Ա Ս

(Ըստումակութիւն տես Բազմավէպ, 1926 էջ 240)

Թ. Ա. Ա. Ռ Ի Շ Ա Խ Ա Ն Տ Ե Բ Ի Ա Ն Դ Ե Ա Ն

Անուշաւան Գրիգոր Տէր-Ղևոնդեանը ճնշել է 1887 թվի Փետրարի 23-ին Թիֆլիսում, Նրա հայրը Գանձակ Նահանգի Նիւզբար գիւղացի էր և դեռ 12 տարեկան հասակում իր Նիկողայոս («Մայրենի լեզվի» Հեղինակը) եղրօր հետ ինքնուրոյն կերպով եկել է Թիֆլիս: Այստեղ նա սկսել է սովորել լուսանկարչութիւն, որը յետազայում դարձել է ինը հոգուց կազմած իր բազմանդամ ընտանիքի ապրուստի միակ աղբերը: Անուշաւանի մայրը Թաւրիկեցի է:

Միշնակարգ կրթութիւնն ստացել է նա Թիֆլիսի երրորդ արական զիմնացիայում, միաժամանակ սովորելով նաև երաժշտական (Ռուսաց երաժշտական ընկերութեան) զգործում նւագ-դաշնամուր, պրօֆէսօր Տրուկովսկու մօտ, իսկ թէօրէտիկական (տեսական) առարկաները, որոնք առանձնապէս հետաքրքրում էին նրան: Ն. Դ. Նիկոլակի մօտ:

1907 թիւն, զիմնացիան գերջացնելուց յետոյ, Անուշաւանը փոխադրւել է Պետերբուրգ (այժմեան Լենինգրադ) և ընդունել համալսարանը: Այստեղ էլ զուազընթացարար պարապել է երաժշտութեամբ (մասնագիտական թէօրիա) Միքայէլ Ֆարիկովիչ Գնէսինի մօտ, որը Ռիմսկի-Լիոսակովի աշակերտն ու ընկերն է եղել: Գնէսինը, որպէս մեծ գեղարվեստագէտ և բազմակողմանի զարգացած մարդ՝ շատ է նպաստել Անուշաւանի ստեղծագործական ոգուն և ունեցել է երաժշտական մեծ ազդեցութիւն:

1909 թիւն ընդունելով Պետերբուրգի կոնսերվատորիան, մասնագիտական կոմպոզիցիայի դասարանը, սովորել է պրօֆէսօրներ կալաֆատախ, Լիատով, Շտէյնբերգ Վիսովիչ, Զերենինի և Գլազունովի մօտ:

1915 թիւն գերջացրել է Պետերբուրգի կոնսերվատորիան, ազատ գետարևստագէտի կոչումով, իսկ 1916 թիւն համալսարանի իրաւարանական դասընթացը:

1917 թիւն գերջարծել է նա Թիֆլիս և ստացել կոնսերվատորիայի թէօրէտիկական դասարաններում դասեր, ուր և մնում է մինչեւ այսօր:

Անուշաւան Տէր-Ղևոնդեանի երաժշտական ընդունակութիւնները երևան են եկել գեր ևս չորս տարեկան հասակում: Այդ հասակից նա առանց դժւարութեան, նոյնութեամբ կրկնում էր զանազան երգեր, թէ՛ ժողովրդական և թէ եկեղեցական բնոյթ կրող Նրանց սանը ոչ որ չէր՝ նւազում և նոյն իսկ չկար ոչ մի երաժշտական գործիք: սակայն Անուշաւանի մեծ քոյլը տեսնելով նրա առանձին սերը գեղի երաժշտութիւնը և սովորելու մեծ ցանկութիւնը, ձեռք բերեց եղրօրն

համար մի դաշնամուրք։ Կարճ ժամանակամիջոցում Անուշաւանը ցոյց տևեց մեծ յառաջադիմութիւն և հէնց առաջին տարւանից զգաց զրելու, ստեղծագործելու ընդունակութիւն և ցանկութիւն։ Այդ շրջանում մի քանի մանկական գործեր (երաժշտ.) գրի է առել հէնց ինքը։

Աղյափիսի ուժեղ զգութում դէպի ստեղծագործութիւնը մղեց նրան ուսումնակրելու երաժշտութեան տեսականը, որ նրան շատ էր հետաքրքրում և անցնում էր բաւական հարթ, առանց որևէ դժւարութեան։

Ան. Տէր-Ղևոնդեանը ուսւ շկօլայի հետեւող է. ջերմ երկրպագու է «Խօմրակեանների» («Կոյկորօն») Մուսորգսկու, Ծիմակի-կորսակովի, Գլազունովի, նաև Վազների ու Ալբերտինի։ Իր գրածքների մէջ նա անդրադարձրել է ուսւաց մեծ երաժշտագէտների ազգեցութիւնը, պահելով իր անհատական օրիէնտալիզմը։ Նրա սկզբնական աշխատութիւնները, որ երիտասարդ հասակում են զրւած, զաշնամուրի համար են։ Դեռ Պետական բարուրուրդի կոնսչրատորիայում աշակերտ եղած ժամանակ նա զրել է մի շարք վօկալ և խմբական աշխատութիւններ, որ հրատարակել են «Բիսսել և Ընկ»։ Երաժշտական հրատարակութեան և «Էկովկասեան Հայոց Հրատարակչական Ընկերութեան» կողմից։

Նրա աշակերտական գործերը զրւատաման են ենթարկել Պետական բարուրուրդի կոնսչրատորիայի գեղարվեստական խորցրդի կողմից։ Այդ շրջանին են պատկանում նրա հետեւական գործերը. «Գետա դևանիկ», «Շէյխ Սաֆօ», «Առ սիրուհին» «Ճախարակի երգ», «Ուոննի», «Ալի ընկեր», դուէտներ և զանազան երգեր ու խմբերներ։

Ակզրնական աշխատութիւնները, թուզ 27 համար, տպագրած են և մեծ մասամբ սպառաւած։ Խոհ ինչ վերաբերում է նրա յետազայ աշխատութիւններին, նրանց հրատարակած չեն։ Չնայած դրան, բազմաթիւ անգամ քեմազրել են այդ գործերը Պատերուրուրդի «Մյունկալնի Սովորունին»-ի կազմակերպած համերգներին, Մոսկվայում, Թիֆլիսում, Հայաստանի մի քանի քաղաքներում և արտասահմանում։

Տէր-Ղևոնդեանի համեմատարար ուշ գործերին են պատկանում «Ալյուստամար» պիմֆոնիական պօէմ, «Շիրակի և կիրակի երգ», «Փարաման» սիմֆոնիկ պատկերը, Վերջին տարիները զրադաշտ է նաև «Ալյա» երաժշտական դրամայով, որ բաղկացած չուն գործողութիւնից ե եօթը պատկերից։

Անուշաւան Տէր-Ղևոնդեանի հեղինակութիւնների ցանկը

Ա. Տպագրւած

Օր. 1. «Ճախարակի երգ»։

» 2. «Հայկական երգեր» → 1) «Շէյխ-Սաֆօ», 2) «Առ սիրուհին», 3) «Կայներ եմ, զալ չեմ կարող»։



Անուշաւան Տէր-Ղևոնդեան

- » 3. «Երկու խմբերգ» — 1) «Երաղկոց մոռայ», 2) «Անցիր, սև ամպ»;
- » 4. «Հրաժենա» (խօսք՝ Վահ. Տէրեանի), ուստի օրորո-ի և contralto-ի համար;
- » 5. 1) «Ուռենի» (խօսք՝ Ալ. Խաչակեանի), 2) «Արի բնկեր» (խօսք՝ Ալ. Խատուրիանի), խառն խմբի համար;
- » 6. «Մանկական երգեր» — 1) «Մեր տան առաջ», 2) «Երկու նապաստակ», 3) «Կը-կուն» և 4) «Ճախարակ», դաշնամուրի ձայնակցութեամբ;
- » 7. «Վեց երկայն երգ» — 1) «Զմեռ», 2) «Ուկեր», 3) «Գարնանը», 4) «Մանուշակ», 5) «Ոնց են հարում ինոցին», 6) «Ոռուն», դաշնամուրի ձայնակցութեամբ;
- » 8. Երկու երկայն խմբերգ — 1) «Կալի երգ», 2) «Սերմացան», դաշնամուրի նւազութեամբ;
- » 9. Խոսք խմբի համար — 1) «Մարտիկներին», 2) «Արիացիր»;
- » 10. Զորս ժողովրդական երգ — 1) «Նանա բալիկ», 2) «Մարալի եայլի», 3) «Հեյ, եարէ», 4) «Կողքա եայլի»:

Բացի վերյաշեալներից՝ Վրաստանի Պետհրատը հրատարակել է նրա մանկավարժական աշխատութիւնները ուստաբէն լեզով, որ կրում է «Երաժշտորեան տարրական բերիան» և «Ճենանդի ակօրդների ոստումնասիրութեան համար» խոսրագիրները, որոնք դրաւաման են ենթարկւել թիֆլիսի Պետական կօնսէրւատորիայի Գեղարվեստական Խորհրդի կողմից և ընդունւել են որպէս ձեռնարկ Վրաստանի Ս. Խ. Հ. Հ. Երաժշտական դպրոցներում:

Բ. Անտիպները

1. «Ողբամար» — սիմֆոնիկ պօէմ, մեծ նւազախմբի համար (սիմֆէտը՝ Յովկ. Թումանեանի);
2. «Երակի էսկիզներ» — Երակի ժողովրդական թէմաներից, ուստի նւազախմբի համար;
3. «Փարւանա» — սիմֆոնիկ պատկեր. նւազախմբի համար (խօսք՝ Յովկ. Թումանեանի);
4. «Անան» — (խօսք՝ Վահան Տէրեանի), երգ՝ դաշնամուրի նւազածութեամբ;
5. «Գարուն» — (խօսք՝ Յովկ. Յովկնանսէսեանի), մեներգ;
6. «Ճեռու տեղից» — (խօսք՝ Ալ. Խաչակեանի), մեներգ;
7. «Տրիօ», չութակի, դաշնամուրի և ճային համար (խօսք՝ Յովկ. Թումանեանի);
8. «Սէզա» — օպէրա չորս գործ. և եօթը պատկերով (սիմֆէտը՝ Լեռն Շանթի);
9. «Երակի ժողովրդական երգերից», երգի հատ, խմբի համար;
10. Արտասանութիւն, դաշնամուրի ձայնակցութեամբ;
11. «Հայկական ժողովրդական թէմաներից», նւազախմբի համար, «Փանտազիա»:

«Աղջա». — Անուշաւան Ցէր-Ղանտեանի ամենախոշոր աշխատութիւնը «Աղջա» օպէրան է, հարուստ նախարանով. Օպէրայի բրվանդակութիւնը կազմում է ամենըին ծանօթ Շանթի «Հյին Անտածներ» դրաման:

Օպէրայի կլաւիրը մանր ձեռագրով՝ 250 երես է, իսկ ինստրումենտօվան ներկայում վերջացած է. Մի քանի կտորներ ցուցադրւել են թէ դաշնամուրի վրայ և թէ օրքեստրով: Միմփոնիկ նւազը ղեկավարել է 1923-24 թւին Ստուարտա-ը այնուշեան Տրու-ը և վերջերս էլ ինչը, հեղինակը թուս, կ. Գործ. կ. Երրորդ նստաշրջանի առթիւ, նրա անդամների համար կազմակերպած երեկոյ. թին: Վօկալ մասերը և առանձին օրուները երգում են երգչուհի Ցէր-Դիանիներնեանը, երգիչ վենետիկեանն և ուրիշները:

Առանձին կոտարաման և հրատարակման համար օպէրայից հնարաւոր են հետևեալ տեղերը: Արեգայի հինգ օրուն-ները (թէնօրի համար), Սէղաի երկու օրուն ները (soprano-ի համար), Հայր Անտոնի պատմութիւնը (բարիտոնի համար), Խշնանի երթը՝ (օրէստրի համար), Լ. գործ. Ա. պատկերի նախարգանը (նւա-

գախմբի), Բալէտի կտորներ (նւազախմբի համար), միջանկեալ համար «Վահազնի ծնունդը» (խօսք՝ Յովկ. Յովկիննիսեանի) ութիւնը ձայնանի և մեծ նւազախմբի համար, և վերջարան «Փորորիկ» (պատկեր նւազախմբի համար):

Ան. Տէր-Ղեռնդեանի ուղղութիւնը (գրական) ուշալիքմն է, ոճը արեւեան, երբեմ զուտ հայկական: Հեղինակութիւնների սիրած ձեզ, փօրման նւազախմբի համար է: Գլխաւորապէս նա աչքի է ընկնում այդ ուղղութեամբ զրւածքներով: Այդ վկայում են նաև անաշառ ըննազատները (Քրյուկօվ-ի յօդածը «Զարա վոստօկ» թերթում), Փոցը հասակից նա զբաւում էր նւազախմբով, իսկ զիմնազիայում եղած ժամանակ նւազում էր կլարնէտ և երբեմ էլ ղեկավարում էր աշակերտական նւազախմբում:

Առնասարակ նրա հեղինակութիւններն աչքի են ընկնում ձեւերի ընդարձակութեամբ և հնչում են հանդիսաւոր և հարուստ հարթօնիայով: Այդ գործերի մասին ըննազատութիւններ լոյս են տեսել զանազան ժամանակներ և զանազան պարբերականներում: «Речь», «День», «Уголок», «Ниржевая ведомости», «Угарота-къ», «Зара востока», «ЛЮРИ-ДОИ», аյլ և վրացական թերթերում: Իրուս երաժիշտներն իրենց ըննազատականների մէջ Քրյուկօվ, Եզլյան, Ճանուկյան Կոլտայք տալիս են զրական գնահատութիւն: Ինչ վերաբերում է հայ ըննազատականներին, սկզբում բոլորն էլ դրական չեն արտայայտում, սակայն մեծ մասամբ նրա գործերը համակրութիւն են գտնում:

Ան. Տէր-Ղեռնդեանի հասարակական գործունէութիւնը չի սահմանափակուում միայն երաժշտական հեղինակութիւններով, նա երեան է զալիս նաև մանկավարժական ու կազմակերպչական գործով:

Պետերուրցում ուսանող եղած ժամանակ նա հայկական զազութիւն կից կազմել է խառը հայկական նւազախումբ, որը մի քանի տարի շարունակաբար բեմ է զուրու եկել իր բաւական ճոխ ծրագրով հէնց իր զեկավարութեամբ: Նոյն նւազախումբը հրաւիրւել է «Վետակ Յնամք Ֆ-ի կազմակերպած ազգագրական համերգին, ցուցազրելու համար հայ երաժշտութիւնը»:

Վերացնենալով Պետերուրցի կոնսերտատօրիան նա հրափրւեց թիֆլիսի Պետական կոնսերտատօրիան, որտեղ յանձնեց նրան ինչպէս թէօրէտիկական, այնպէս էլ բարձր մասնագիտական առարկաները: Յանձն առնելով թէօրէտիկական դասարանները նա արմատապէս փոխեց գործնական Ըօլֆեդյան-ի և այլ առարկաների կօլէկտիվ աշխատանքների եղանակը, որով բարձրացրեց աշակերտութեան առաջադիմութիւնը: Այս տէսակէտից Տէր-Ղեռնդեանը մանկավարժական ասպարիզում թիֆլիսի պետ: Կօնսերտատօրիային մեծ ժառայութիւն է արել 1922-1924 ուսումնական տարիներին:

1914 թիմ Սպիրիդ. Մելիքեանի հետ նա ձեռնարկել է ներակի ըրջանում հայ ժողովրական երգեր հաւաքելով, ֆօնօգրաֆի միջոցով: Այդ հաւաքած մօտ 200 երգերը հրատարակել են հայ երաժշտական ընկերութեան կողմից Սպ. Մելիքեանի խմբագրութեամբ:

1916 թիմ «անյայտ» և «X» կեղծանուններով ներկայացրել է նա իր աշխատութիւնները թիֆլիսի հայ երաժշտական ընկերութեան յայտարարած մրցանակին: Կօմիտէն ամենայաջողը գտնում է նրա աշխատութիւնները:

Այս բոլորի վրայ աւելացնենց եայն, որ Հայարտան երաժշտական սէկցիայի մէջ աշխատելու օրից՝ նա հրմց է զրել ոչ որի կողմից չնախատեսնած երաժշտական ստուգիային, մի շարք դասարաններով և լաւագոյն ուժերով: Հայարտան կից եղել է նաև սիմֆոնիկ օրկեստր, երգեցիկ քառաձայն խումբ և վոկալ

ուժեր, հերթական համերգներով, լլշնան նախատեսնուում է բանալ նաև ռպէրային ստուդիա:

Բացի երաժշտական հեղինակութիւններից և մանկավարժական աշխատանքներից՝ նա գրել է նաև մամուլի էջերում (աշակերտական շըշանում) հայկական թէ աշխարհիկ և թէ եկեղեցական երաժշտութեան մասին։ Ուսուաց Մազկալինի Հօրմենինք»—ի համար նա գրել է «հայկական եկեղեցական երգեցողարհան հիմքը»։ «Աերթապէս յիշատակենք այն, որ նա թիֆլիսի կօնսէրւատօրիայում կարգացել է դասախոսութիւն իր կազմած «հայկական ժողովրդական և եկեղեցական երաժշտորհան պատմորհան» մասին։

Թիֆլիս

Գ.Ա.ՅԱ ՌԻՄ-ՇԱՏ
(երաժիշտ)

Ժ. ՍԱՐԳԻՍ ԲԱՐԽՈՒԴԻՄԱՐԵԱՆԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆԻ

Մուել եմ 1887 թւի օգոստոս 20-ին թիֆլիսում։ Հայրս վաճառական էր և մենք ոչ մի նիւթական կարիք չէինք զգում։ Եօթը տարեկան հասակումն վախճանեց հայրս թողնելով խոշոր գումար։

Հօրս մահւանց յետոյ մայրս ամրողովին նսիրեց իր ութը զաւակների կրթութեան գործին, որի համար շինայեց և ոչ մի նիւթական միջոց։

Ութը տարեկան հասակումն մոտայ թիֆլիսի եղորդ զիմազիան։ Ջաւականանալով ուսուական կրթութեամբ՝ մայրս մի քանի տարուց յետոյ տեսց և հայերէն ու Փրանսէրէն լեզկի զիտութեան, հրաւիրելով զրա համար յատուկ ուսուցիչներ։

Տասներկու տարեկան էր երը մայրս գնեց մեզ համար զաշնամուր, որի վրայ սովորում էին ցոյքերու ևս զեռ փոքր հասակում նւազում էի զանազան գործիքների վրայ, ինչպէս՝ շւի և մանկական քնարը. երը մեր տանը արդէն կար զաշնամուր ես նւազում էի իմ զիտցած բոլոր մէջօդիաները, իսկ մօտ երեք ամսից յետոյ ես ինդրեցի մօրս ինձ էլ սովորեցնել զաշնամուր նւազել։ Այն ժամանակայայ զաշնամուրի ուսուցիչ Սօփ. իգ. կարախանեանի մօտ ես արդէն դասեր էի վերցնում. չէր անցել 6-7 ամիս ես արդէն նոտաներով նւազում էի այն ժամանակաւայ ժողովրդականացած զորդանանի յայտնի «բայարին»։ Երկու տարուց յետոյ մոտայ թիֆլիսի երաժշտական զգրոցը առաջին շըշանում դասեր վերցնելով վասկովակու և ապա լ. Ցուուկվակու մօտ։

1907 թին վերջացրի թիֆլիսի III զիմազիան և ապա անցայ Բերլին երաժշտական կրթութիւն շարունակելու նպատակով։ Բերլինում մոտայ «Կայսերական կօնսէրւատօրիան» («Königliche Hochschule für Musik»), Ընտրեցի ծոհան Շուլցի զասարանը։ Այնուհետ մնացի երեք սէմէստր։ Այն օր ութը ժամանական շաբանանը, տէխնիկան զարգացնելու համար, մեռցրին իմ մէջ գէպի զաշնամուրով պարապելու իմ բոլոր գնումները, ուստի որոշեցի թողնել Բերլինը և անցնել Պետերբուրգ (Լենինգրադ)։ Նւիրւել թէօքէտիկական զիտութիւն ստանալու, նա մանաւանդ որ իմ երաժշտական կրթութեան առաջին քայլերից ես արդէն սեղծագործում էի։

Գալով Լենինգրադ՝ ես սկսեցի պարապել Մ. Գնէսինի մօտ, որը թիմսկի

1. Սարգ. Բարինուղարեանն իր կենսագրութիւնը մեր ինդրանօց պատրաստել է յատկապէս մեր ալմանակի համար։ Ա. Ե.

- Կորսակովի լաւագոյն աշակերտներից մէկն էր, որ զարթեցրեց իմ մէջ սէր դէպի մայրենի երաժշտութիւնը; Նրա մօտ զրած իմ փոքրիկ աշխատանքներից մէկը յետազայում ծառայց իրբե մի մասը (scherzo) իմ զրած սօնատայի: Չորս, հինգ ամսից յետոյ Գնէսինը մնկնեց Լենինգրադից և առաջարկեց ինձ շարունակել պարապմունքներս իր ընկերող ժիտումներսկու մօտ, որը նոյնպէս իմիմսիկ-կովի աշակերտներիցն էր. Այս մօտ զրած իմ առաջին «Արևելան պար ըստ հանդիսացաւ իրբե օրինակ իմ ստեղծագործական ընդունակութեան, որի շնորհիւ և ես ընդունւեցի Պետական կոնսերւատորիան: 1910-11 ուսման թից ես արդէն պարապում էր Լենինգրադի կոնսերւատորիայում վ. կալաֆատոսիի մօտ, անցնելով հարմօնիա, կօնտրապունկ և Փուզա: Ֆօրմաներն անցայ վիտոլի մօտ: Վիտոլն ազգութեամբ լատին էր. Նա բոլորովին չէր հասկանում արևելեան երաժշտութիւնը և որովհետեւ ես առանց բացառութեան աշխատանքներս ներկայացնում էի արևելեան ոճով, նա յանդիմանում էր և ասում. «Գրեցէր այնպէս, որ հասկանալի լինի ինձ: Ես յամառութեամբ շարունակում էի զրել նոյն ձեռով: Տեսնելով որ ես չեմ լուսւ իրեն և համարելով ինձ անուղղելի, ասաց. «Զեզ Փառ ես ոչինչ անել չեմ կարող, շարունակեցէր ինչպէս ուզում էր»:

1915 թիւ գարնանը ես ներկայացրի իմ արևելեան ոճով զրված «Սոնատ» ը իրբե կօնսերւատորիայի աւարտական աշխատանք: Ներկայացրած Սոնատու, իրբե մի օրիգինալ աշխատանք, առանձին ուշազրութեան արժանացաւ ընկել յանձնաժողովի կողմից (Դիլազունովի նախազանութեամբ), որով առաջարկեց ինձ մասը կօնսերւատորիայի ստեղծագործական դասարանում կատարելագործելու: Ես նորից մոռայ պրօֆեսոր կալաֆատոսիի դասարանը, որը շատ համակռութեամբ էր վերաբերուում դէպի իմ աշխատանքների մէջ զերակցող արևելեան ոճը: Այդ դասարանում էլ զրեցի իմ սիմֆոնիական «Անուշ» պօէման մնձ օրկէստրի համար և մի շարք դաշնամուրի պիէսներ:

1917 թիւն տեղափոխւեցի Թիֆլիս և զրադեցի կողմանի դասեր տալով: 1919-21 թիւ գարնանը զեղակարում էի Երևանի իմարգարական դասընթացները, որ ժամանակի աննպաստ պայմանների պատճառով առանձին արդիւնք չաւեց:

1922 թիւ ամառը շրջել եմ Հայաստան (Ղարաբիլսէ, Ջալալողի, Ալէր-պօլ) ինչպէս և Պաթում, Բագու և ապա ուսուաստանում (Մօսկա և Լենինգրադ) և կազմակերպել եմ համերգներ իմ զրւածքներից:

Լենինգրադի համերգը մնձ յաջողութիւն ունեցաւ, տեղի կօնսերւատորիայի վարիչ յայտնի առև հօմազիատօր Գլազունովը հետեւել կերպով արտայայտւեց իմ ստեղծագործութիւնների մասին. «Բարիսուզարեանի սահեղծագործութիւնները լսելուց յետոյ, ես կարող եմ վկայել, որ նա օժտւած է անկասկած ստեղծագործական շնորհը: Նրա ստեղծագործութիւնները ազգային բնոյթ են կրում ձմի զեղեցկութիւն և ներդաշնակութիւններ: Այդ բոլորն ապացուցում են, որ հեղինակը լաւ կատարելագործւած էր արժիշտ: Էւ Ցանկալի կը մինէր, որ նրա աշխատանքները լոյս տեսնէին, իրբե մի վերին աստիճանի հետացրեիր նիւթ»:

1923 թիւն հրավիրեցի Թիֆլիսի պետական կօնսերւատորիայի բարձրագոյն թէօքէտիկական առարկաների դասասու, որը վարում եմ մինչեւ օրս:

Գալով իմ զրական աշխատանքներին, բացի սօնատայից և սիմֆոնիկ պօէմից ուսեմ նաև մի շարք դաշնամուրի պիէսներ: Նրանցից ապացուած են.

Ա. «Արևելեան պարեր» 1913 թ. Լենինգրադում.

Բ. «Նազ-Պար» 1920 թ. Մօսկայում.

Գ. «Դաշնամուրի պիէսների աէրիան»

1. Աշնանային
2. Հեքիաթ
3. Օրոր
4. Ակվարիչ
5. Կո քեզ D Mol N. 3
6. Կո քեզ H Mol N. 2

Տպագրութեան պատրաստ են մի շարք ժողովրդական երգեր գաշնամուրի չամար, երկու պիես վիօլոնչէլի համար, մի շարք (սէրֆա) ժողովրդական երգեր (ձայնի համար) զաշնամուրի ակօմպանիմէնտով, ժողովրդական երգեր (սէրֆա) սալոն օրկեստրի համար և ուրիշ բազմաթիւ զաշնամուրի պիեսներ, որոնք կատարուում են զանազան կոնցերտներում:

Պէտք է յիշեմ նաև այն, որ 1909 թիվն, երբ թիրլինից անցայ լենինգրադ, մուսյ նաև միաժամանակ համալսարանի ֆիզիգո—մաթէմատիկական ֆակուլտէտը, սակայն ժամանակ չունենալով կատարելագործւել երաժշտութեան մէջ և յաճախել համալսարանը, երրորդ կուրսից թողի համալսարանը և ամբողջապէս նիւթւեցի երաժշտական աշխատանքներիս:

Հրտ. Առաջ Երեսնեն



Ս. Ռ. ՓԱՅՑԵԼԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԱՄԱՎԵՐՁԻ ՀԱՆԴԵՍԵՐԸ

Մարզահանգիս. — Մրցանակարաշխութիւն. — Մեր Համալսարանականները

ՊԱՅՑՈՒԱԿԱՆ անձերու, ընտիր բազալթեան մը՝ հայերէ և իստալացիներէ բազացած, և յառկապէս դպրոցներու ներկայացուցիչ մարմիններու առջն՝ հայութեան այս նախանձելի սերունդը իր մաքին աշխայոյն ու իր մարմնոյն ճկուն կորպը ցուցուց ժամէ մ'աւելի տևեց անոնց մարզական ցոյցը, սակայն անդաւար շարժումն ու զանազան խումբերու միաժամանակ խառն և պէսպէս հրահանգները յարատեւ ծափերու արժանացան. անաւանդ որ այս անգամ թւա. կալոյ ընդհանուր հրամաններ միայն կու տար, զորս երազօքէն իրենց բաժիններուն կը հաղորդէին խմբապեաններն և զարմանալի կանոնաւրութեամբ գործադրել կու տային: Իրեւ ուս. կալոյի օգն. և փո-

իանորդ էր Հայկ Անմահեան, զլուխ խմբապետներու որ Յ մեղր բարձրութեան ցատրելով՝ ձողով՝ բուռն ծափեր խլեց. ինչպէս նաև երեք խմբապետներ, Արմեն Պայեան. բրձր. 2:80 Փիլիպպոս Նորհատան՝ 2:60, Բագրատ Մարգիսեան՝ 2:40, և Հրանտ Մանուկեան փողքահասակ պատմին՝ 2:20:

Քանի մը զժուար հրահանգներ՝ զորմեծ խումբեր կատարեցին՝ մեծապէս զնահատուեցան և ծափահարուեցան, ինչպէս Պաւամանի յենարաններով ևն...:

Հուսկ մեծապէս հետաքրքրեց ձեռցով զնդակի խաղը, ուր պատկերացաւ հայում մարզական վար հոգին և աշխայժը, միանգամայն այս խաղին գեղեցկութիւնը ստնագունդին (foot-ball) վրայ: